ՍՈՒՐԵՆ ՇՏԻԿՅԱՆ – Հարգելի ռադիոլսողներ և պատանի բարեկամներ: Արդեն երրորդ անգամ «Հասակակիցներ» խմբագրության նախաձեռնությամբ եթեր է արձակվում «Սրանք առայժմ հանելուկներ են» ընդհանուր խորագիրը կրող հաղորդաշարը, որտեղ գիտահանրամատչելի լեզվով ձեզ է ներկայացվում մտավոր-հասարակական կյանքում առկա այն երևույթները, որոնք մինչև այսօր դեռ մասնագիտորեն պարզաբանված չեն: Մեր հաղորդումների կապակցությամբ ստացել ենք բազմաթիվ հեռախոսազանգեր, նամակներ, հաղորդաշարը դրվատող կամ զանազան բնույթի առաջարկություններ անող բանավոր կարծիքներ, որոնց անդրադառնալը նույնպես մտնում է մեր պարտականությունների մեջ: Ի նկատի ունենալով դա, այս անգամ նպատակահարմար համարեցինք շեղվել մեր նախորոշած ուղուց: Թեև այսօր խոսելու էինք հայերեն տառերի ստեղծման հետ կապվող մի քանի հանելուկների մասին, բայց այս հաղորդման ընթացքում կանդրադառնանք ռադիոլսողների ուղարկած նամակներին, նրանց կարծիքներին ու առաջարկներին:

Արձանագրենք այն ուրախալի փաստը, որ «Սրանք առայժմ հանելուկներ են» հաղորդաշարը լսողների թվում կան ամենատարբեր մասնագիտությունների ու տարիքի մարդիկ: Դրվատական կարծիքներ հայտնեցին ու մեզ հաջողություններ ցանկացան բանասիրական գիտությունների թեկնածուներ Ռուզաննա Նանումյանը, Հրանուշ Դարբինյանը, Խաչիկ Սամվելյանը, բժշկուհի Հռիփսիմե Սաժումյանը, տնտեսագետ Լենա Թադևոսյանը, ինժեներ-քիմիկոս Զեմֆիրա Կարասեֆերյանը, հաշվապահ Ռիտա Սահակյանը, դասախոս, այժմ կենսաթոշակառու Զեմմա Կյուրինյանը, իրավաբան-կոնսուլտանտ Յոնա Դավթյան-Խոջագորյանը, ինժեներ Մարինե Սարգսյանը և շատ ուրիշներ: Մեզ մնում է ջերմ շնորհակալություն հայտնել ինչպես հիշատակված անձանց, այնպես էլ մեր մյուս ռադիոունկնդիրներին և հավաստիացնել, որ կանենք հնարավորը «Սրանք առայժմ հանելուկներ են» հաղորդաշարը ավելի հետաքրքրաշարժ ու բովանդակալից դարձնելու համար:

Ստացել ենք նաև ոչ քիչ թվով հեռախոսազանգեր, որոնց հեղինակները կամենում են լրացուցիչ տեղեկություններ ստանալ նախորդ հաղորդումների ընթացքում հնչած այս կամ այն փաստի վերաբերյալ:

Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի ուսանող Խաչիկը դրվատելով «Երկաթե դիմակի» մասին հաղորդումը, զարմացած հարց էր տալիս. «Մի՞թե Բաստիլ բերդի արխիվներում կամ նրանց այլևայլ գրագրություններում ոչ մի խոսք չի պահ–

պանվել այդ հանելուկային «Երկաթե դիմակի» մասին: Գոնե պարզվեր կալանավորի անունը...»:

Հարցի պատասխանը, սիրելի Խաչիկ, հետևյալն է: Դեռ XIV դարում որպես Փարիզը պաշտպանող բերդ-ամրոց կառուցված և XV դարից քաղաքական բարձրաստիճան հանցագործների համար բանտի վերածված Բաստիլը, այդ իսկ ժամանակվանից սկսած, կալանավորների նկատմամբ մշակել ու կիրառում էր որոշակի գործավարական կարգ: Այսինքն՝ Բաստիլ բերվող յուրաքանչյուր կալանավորի համար, սկսած բանտարկության առաջին իսկ օրվանից, բացվում էր հատուկ անձնական գործ, որտեղ գրի էին առնվում նրա հետ կապվող բոլոր կարևոր իրադարձությունները: Հանգամանորեն արձանագրվում էին, օրինակ, բանտարկյալի առողջական վիճակը, նրան այցելողների անունները, այցելության նպատակն ու տևողությունը, նրա նամակագրությունը (եթե այդպիսին լինում էր) և նա–մակների թեմաները: Ըստ որում, մեծ մասամբ գործին կցվում էին նաև նամակների պատճենները: Հասկանալի է, որ նման անձնական գործ էլ եղել է «Երկաթե դիմակի» վերա–բերյալ, որտեղ պետք է որ գրանցված լիներ հինգ տարի շարունակ Բաստիլում անցկացրած նրա կյանքի բոլոր կարևոր դրվագները: Սակայն եկավ 1789 թվականը, ֆրանսիացի ժողո–վուրդը ընդվզեց Լյուդովիկոս XVI-ի բռնապետական վարչակարգի դեմ, այդ ընդվզումը վերածվեց հուժկու ապստամբության, իսկ որովհետև արքայական բռնակալության խոր–հըրդանիշը հանդիսանում էր Բաստիլը, ապա ապստամբած ժողովուրդը գրոհեց դրա վրա: 1789 թվականի հուլիսի 14-ին ապստամբները ճնշելով Բաստիլի՝ 32 հոգանոց կայազորի դիմադրությունը, ներխուժեցին այնտեղ՝ ոչնչացնելու բացարձակապես ամեն ինչ: Այստեղ էլ ահա, տեղի ունեցավ ցավալի սխալը: Այրելով այն ամենը, ինչ կարելի էր այրել, ապստամբները հրդեհեցին նաև Բաստիլի թանկարժեք արխիվը, որը, ըստ մեզ հասած կցկտուր տեղեկությունների, բաղկացած էր մի քանի հազար միավորից: Այսպիսի ան–դառնալի կորստից հետո «Երկաթե դիմակի» հետ կապված մանրամասնությունները ճշտելը գրեթե անհնար դարձավ: Հարկավոր եղավ դիմել օժանդակ աղբյուրների օգնու–թյանը, ինչը և արվում է մինչև օրս:

Անդրադառնանք «Երկաթե դիմակ» անվանը: Քանի որ Բաստիլը արքայական բանտ էր հանդիսանում, այսինքն՝ այնտեղ բանտարկվում էին պետական, կառավարական, ա–զգային ականավոր դեմքեր, ապա այստեղ էլ որոշակի աշխատակարգ էր մշակված: Առա–ջին իսկ օրը, երբ կալանավորը բերվում էր Բաստիլ, նա իր հետ ունենում էր հատուկ փակ ծրար, որի մեջ թագավորի ստորագրությամբ վավերացված թղթի վրա նշված էր լինում

կալանավորի անուն-ազգանունը, կենսագրական տվյալները, իսկ ծրարի վրա՝ նրա կեղծանունը: Այդ կեղծանունով էլ նա հանդես էր գալիս ողջ բանտարկության ընթացքում, իսկ մահանալու դեպքում, նրա մահը հանրությանը տեղեկացվում էր այդ կեղծանունով: Արդեն նշել ենք, թե երբ էր մահացել «Երկաթե դիմակը» և նրա մահն ազդարարող պաշ–տոնական տեղեկատվության մեջ նա անվանված էր «Մարշիոլի»: Ֆրանսիացի պատմա–բանները, վկայակոչելով Բաստիլում ընդունված աշխատակարգը, դեռ այն ժամանակ պնդեցին, որ «Մարշիոլին» կեղծանուն է, բայց թե ով էր թաքնված այս կեղծանվան ներքո, հնարավոր չեղավ պարզել: Դա չի պարզված ընդհուպ մինչև մեր օրերը:

Ինչ վերաբերում է Բաստիլի հետագա ճակատագրին, որն այնպես հետաքրքրում է աշակերտուհի Ռոմելային, ապա համառոտակի՝ այն այսպիսին է: Ապստամբած ժողո–վուրդը քարուքանդ արեց բանտը, վերածելով այն ավերակների խառնակույտի: Նույնիսկ որպես պատմական հուշարձան վերականգնելը, անկարելի եղավ և հիշատակված ապս–տամբությունից հետո, 1790 թվականին ֆրանսիական կառավարությունը որոշեց քանդել Բաստիլը: Մոտ մեկ տարի անց՝ 1791 թվականի մայիսի 15-ին, քանդման աշխատանքներն ավարտվեցին: Առաջացած մեծ հրապարակը սալահատակվեց քանդված բանտի քարերով, այն պաշտոնապես ստացավ «Բաստիլի հրապարակ» անունը, որի կողքին էլ հետագայում կառուցվեց «Ազատություն» անունը կրող կոթող-հուշարձանը: Թե՛ Բաստիլի հրապարակը, և թե՛ կոթող-հուշարձանը գոյություն ունեն առ այսօր:

Հեռախոսազանգով մեզ դիմած №114 դպրոցի աշակերտ Հայկ Ղազարյանի և նրա քրոջ՝ ուսանողուհի Զարուհի Ղազարյանի հարցերը ունեին գրեթե նույն բովանդակու–թյունը: «Ինչպես լսել ենք, – ասացին նրանք, - «Երկաթե դիմակի» տակ թաքնված մարդ–կանց թվում հիշատակվում է նաև մի հայ գործիչ Հաբեթիկ անունով: Այդ մասին քույր ու եղբայր շատ ենք վիճել: Խնդրում ենք ձեր պարզաբանումները»:

Սիրելի Հայկ և Զարուհի Ղազարյաններ, պետք է ասեմ, որ ձեր լսածը ըստ էության ճիշտ է: «Երկաթե դիմակի» թեկնածուների թվում երկար ժամանակ հիշատակվում էր հայ–ազգի մի հոգևորական-մշակութային գործիչ Ավետիք (և ոչ թե Հաբեթիկ) պատրիարքը: Սա հանրահայտ Ավետիք Եվդոկիացին է, որը 1702 թվականին ընտրվելով թուրքահայության պատրիարք, հաստատվեց Պոլսում և սկսեց եռանդուն գործունեություն ծավալել հօգուտ իր ժողովրդի: Սա բոլորովին դուր չեկավ Պոլսում ֆրանսիական կառավարության դեսպան Ֆերիոլին, որի ջանքերով էլ Ավետիք Պատրիարքը 1706 թվականին հանելուկային ձևով

անհայտացավ Պոլսից և երկար թափառումներից հետո 1709 թվականին վերջնականապես հայտնվեց Փարիզում ու արգելափակվեց Բաստիլում: Իսկ քանի որ Ավետիք պատրիարքի նկատմամբ էլ կիրառվում էր նույն խստաշունչ կարգավիճակը, ինչ «Երկաթե դիմակի» հանդեպ, ապա եվրոպացի պատմաբանները այս երկուսին սկսեցին նույնացնել իրար:

Խնդրի պարզաբանման հարցում առաջին քայլն արեց ֆրանսիացի հայագետ Մարի-Ժան Բրոսսեն: Նա Փարիզի կենտրոնական արխիվում գտավ Ավետիք Պատրիարքի՝ ֆրանսերեն լեզվով գրված մի նամակը, որը ուներ շատ կարևոր՝ 1710 թ. նշումը: Սա նշա–նակում էր, որ Ավետիք Պատրիարքը 1710 թվականին դեռ կենդանի էր, իսկ «Երկաթե դի–մակը», ինչպես արդեն ասել ենք, վախճանվել էր 1703 թվականին: Այստեղից բխում է պարզ եզրակացություն. Ավետիք Պատրիարքը չէր կարող «Երկաթե դիմակը» լինել:

Բրոսսեի գտած այս նամակը, որը նա համապատասխան մեկնաբանություններով հրատարակեց Փարիզում, մտքերի աշխույժ փոխանակություն առաջացրեց և մեծապես խոսեց հօգուտ նրա, որ Ավետիք Պատրիարքը բոլորովին այլ անձնավորություն է: Հաջորդ ուշագրավ քայլն արեց Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, պատմաբան Մի–քայել Չամչյանը: Նա Հռոմի արխիվներում աշխատելիս՝ գտավ Ավետիք Պատրիարքի մի շարք նամակներ, որոնք ունեին դարձյալ շատ կարևոր «1711 թիվ ի Փարիզ, Մայրաքաղաքն Գաղղիո» նշումը: Այստեղ էլ եզրակացությունը շատ պարզ է. Ավետիք Պատրիարքը 1711 թվականին դեռ կենդանի էր և գտնվում էր, իր բառերով ասած, «Գաղղիո մայրաքաղաք Փարիզում»: Այս դեպքում էլ փաստը խոսում է հօգուտ նրա, որ Ավետիք Պատրիարքը բոլո–րովին էլ «Երկաթե դիմակը» չէ: Հետագա պրպտումները ավելի ու ավելի հաստատեցին այս տեսակետը և այսօր արդեն որոշակիորեն հայտնի է հետևյալը. 1709 թվականին ներփակ–վելով Բաստիլում, Ավետիք Պատրիարքը այնտեղ անց է կացնում շուրջ երեք տարի, ազատվում է կալանքից և, քանի որ նրան արգելված էր հայրենիք վերադառնալ, մնում է Փարիզում, որպես տեղի հայկական եկեղեցիներից մեկի քահանա: Այստեղ էլ ազատ ժամերին նա զբաղվում է ֆրանսերենից հայերեն թարգմանություններով, գրում է բանաս–տեղծություններ, տաղեր, իր «Ինքնակենսագրությունը», որը մեծ արժեք է ներկայացնում, և այլն: Նա վախճանվել է Փարիզում, համեմատաբար երիտասարդ՝ 54 տարեկան հասակում: Ավետիք Պատրիարքի թեկնածությունն այսպիսով, վերջնականապես դուրս է գալիս:

Ավարտելով մեր ամփոփումը կկամենայինք խնդրել հետևյալը: Հեռախոսազանգե–րով մեզ դիմած ունկնդիրների մեջ շատ են այնպիսիները, ովքեր ներկայացան միայն

անունով, այդ իսկ պատճառով էլ մեր պատասխաններում մենք ստիպված եղանք նրանց միայն անուններով կոչել: Քիչ չէին նաև այնպիսինները, ովքեր առհասարակ չներկայացան:

Խմբագրությունը խնդրում է մեզ դիմելիս անպայման ներկայանալ, նշելով նաև աշ–խատավայրի կամ ուսումնական հաստատության անունը: Հակառակ դեպքում ստիպված կլինենք չպատասխանել տրված հարցերին:

Մնում է միայն հավելել, որ նախկինում տրված խոստումը մնում է ուժի մեջ և «Սրանք առայժմ հանելուկներ են» հաղորդաշարի հաջորդ հաղորդումը նվիրված կլինի հայկական տառերի գյուտին վերաբերող մի քանի չպարզաբանված հարցերի:

Հաղորդման տարեթիվը ճշտել չհաջողվեց: